



Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի

Վանաձորի գրասենյակ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Զանգվածային լրատվության միջոցներով  
թմրամիջոց գործածող անձանց,  
թմրամիջոցների ապօրինի  
շրջանառությանը և թմրամիջոցներին  
առնչվող այլ հրապարակումների  
մշտադիտարկման արդյունքները  
2018-2019 թթ.

Վանաձոր

2020

Հեղինակային խումբ

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Կազմեց՝ Մարիետա Թեմուրյան



Սույն տեղեկանքը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ֆինանսական աջակցությամբ:

Տեղեկանքում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են, և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

## Բովանդակություն

Նախաբան	4
Հրապարակումների աղբյուրները	6
Հրապարակումների բնույթը, հանրային վերաբերմունքի ձևավորման վրա դրանց ազդեցությունը	10
Հրապարակումների բնույթը	10
Հրապարակումների ազդեցությունը թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա	11
Հրապարակումների ազդեցությունը թմրամիջոցների և դրանց գործածման նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա	13
Հրապարակումներում մարդու իրավունքների խախտման դեպքերի արտացոլումը	14
Ամփոփում	19

## Նախաբան

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2011թ.-ից մշտադիտարկում է զանգվածային լրատվության միջոցները, հավաքագրում և վերլուծում է թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և թմրամիջոցների վերաբերյալ այլ հրապարակումները<sup>1</sup>: Մշտադիտարկումը նպատակ ունի բացահայտել թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ պետական քաղաքականության բնույթը՝ պետական մարմինների կողմից հրապարակվող տեղեկությունների բովանդակության գնահատման միջոցով, ինչպես նաև հանրային վերաբերմունքի ձևավորման վրա ոլորտին առնչվող հրապարակումների ազդեցությունը:

Սույն տեղեկանքում ներկայացվում են 2018-2019 թթ.-ի մշտադիտարկման արդյունքները՝ 2017թ.-ի տվյալների հետ համադրությամբ:

Մշտադիտարկվել են 16 ինտերնետային էջ, որոնցից 4-ը՝ police.am, moh.am, prosecutor.am, mlssa.am՝ պետական մարմինների և news.am, a1plus.am, lragir.am, 168.am, 7or.am, epress.am, ilur.am, galatv.am, armlur.am, politik.am, operativ.am, hhpress.am կայքերը:

Հրապարակումները վերլուծվել և դասակարգվել են՝

1. ըստ տարածման աղբյուրի՝

- *պետական մարմինների պաշտոնական էջերով հրապարակված նյութեր,*
- *զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված նյութեր,*

2. ըստ պետական մարմինների, կազմակերպությունների և մարդկանց խմբերի,

3. ըստ բովանդակության՝

- *քրեադատավարական գործողությունների իրականացման վերաբերյալ հրապարակումներ (քրեական հետապնդում, բերման ենթարկում, ձերբակալում, նախաքննություն, դատաքննություն, պատժի նշանակում, թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի ու պատասխանատվության միջոցների կիրառում),*
- *ընդհանուր բնույթի տեղեկատվական նյութեր (վիճակագրական տվյալներ ներկայացնող, թմրամիջոցների ազդեցության, կիրառության, գործածման,*

---

<sup>1</sup> Մշտադիտարկման արդյունքում կազմված նախորդ տեղեկանքները տե՛ս հետևյալ հղումներով՝ <https://drive.google.com/file/d/13GIsTnLigngKc7mhzyiOZJ-F1Q-J8yg3/view>, <http://archive.hcav.am/publications/19-04-2017-001/>, <http://archive.hcav.am/publications/14-04-2016-02/>

*հետազոտությունների, ապօրինի շրջանառության դեմ պայքարի շրջանակներում պետական քաղաքականության վերաբերյալ նյութեր):*

Քրեադատավարական գործողությունների իրականացման վերաբերյալ հրապարակումներն իրենց հերթին խմբավորվել են՝ ըստ հետևյալ թեմաների՝

- թմրամիջոց գործածող անձանց կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ հրապարակումներ, որոնք չեն վերաբերում թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը,
- թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ հրապարակումներ, որոնցում մատնանշվել են պաշտոնատար անձինք և քաղաքացիներ,
- թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ հրապարակումներ, որոնցում հիմնականում տեղեկություններ են պարունակվել թմրամիջոցի կամ թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող խմբերի հայտնաբերման մասին՝ առանց կոնկրետ անձանց կամ մարդկանց խմբերի մատնանշման,
- քաղաքացիների նկատմամբ քրեական պատասխանատվության, քրեական հետապնդման և քրեադատավարական այլ գործողությունների մասին նյութեր:

Հրապարակված նյութերը գնահատվել են թմրամիջոց գործածող անձանց և նրանց խնդիրների նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա ունեցած ազդեցության տեսանկյունից՝

- դրական վերաբերմունք ձևավորող,
- բացասական վերաբերմունք ձևավորող,
- չեզոք բնույթի նյութեր (դրական կամ բացասական վերաբերմունք չեն ձևավորում) և

թմրամիջոցների և դրանց գործածման նկատմամբ ազդեցության տեսանկյունից՝

- բացասական վերաբերմունք ձևավորող (*թմրամիջոցների գործածման բացասական հետևանքների մասին տեղեկություններ պարունակող նյութեր*),
- դրական վերաբերմունք ձևավորող (*թմրամիջոցների գործածումը խրախուսող նյութեր*),
- չեզոք բնույթի նյութեր (*նյութեր, որոնք չեն անդրադառնում թմրամիջոցների գործածման բացասական հետևանքներին, չեն խրախուսում դրանց գործածումը*):

Առանձնացվել են նաև այն հրապարակումները, որոնք տեղեկություններ են պարունակում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ, ինչպես նաև այնպիսիք, որոնք, պարունակելով անձին նույնականացնող անձնական տվյալներ, խախտում են անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը:

## Հրապարակումների աղբյուրները

2018 թ.-ին հավաքագրվել է թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը և, առհասարակ, թմրամիջոցներին վերաբերող ընդհանուր 981 հրապարակում, 2019թ.-ին՝ 2.053<sup>2</sup>-ը: 2018-2019 թթ.-ին հավաքագրված 3.034 հրապարակումից 544-ը տարածվել է պետական մարմինների պաշտոնական կայք-էջերով, 2.490-ը՝ զանգվածային լրատվության միջոցներով:

Պետական մարմինների կայք-էջերով 2018-2019թթ.-ին հրապարակումների գերակշիռ մասը (515 հրապարակում կամ մոտ 95 %) տարածվել է ՀՀ ոստիկանության կողմից և կազմել հավաքագրված հրապարակումների 17 %-ը: ՀՀ դատախազության կայք-էջով հրապարակվել է ընդհանուր 10 նյութ (մոտ 2 %), ՀՀ առողջապահության նախարարության կայք-էջով՝ 19 (մոտ 3 %): ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայք-էջում թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառության կամ թմրամիջոցներին վերաբերող այլ հրապարակումներ չեն եղել (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

### Հրապարակումների դասակարգումն՝ ըստ տարածման աղբյուրի

N	Տեղեկատվության տարածման աղբյուրը	2017 թ.		2018 թ.		2019 թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Պետական մարմնի պաշտոնական կայք-էջ, որից	168	14.4	176	17.9	368	17.9	712	16.9
	ՀՀ ոստիկանություն <sup>3</sup>	164	14	163	16.6	352	17.1		
	ՀՀ առողջապահության նախարարություն	1	0.1	12	1.2	7	0.3		
	ՀՀ դատախազություն	3	0.3	1	0.1	9	0.4		
	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	0	0	0	0	0	0		
2	Զանգվածային լրատվության միջոց	1000	85.6	805	82.1	1685	82.1	3490	83.1
<b>Ընդամենը</b>		<b>1168</b>	<b>100</b>	<b>981</b>	<b>100</b>	<b>2053</b>	<b>100</b>	<b>4202</b>	<b>100</b>

2019թ.-ին, նախորդ տարիների համեմատությամբ, ՀՀ ոստիկանության հրապարակումների թիվը աճել է ավելի քան 2 անգամ: Միաժամանակ, 2018 և 2019 թթ. -ին

<sup>2</sup> 2018 թ.-ին հավաքագրված 981 հրապարակումները վերաբերել են 508 դեպքի, 2019 թ.ին՝ 829 դեպքի: Այսինքն՝ միևնույն անձի կամ դեպքի վերաբերյալ եղել են 1 կամ մեկից ավելի հրապարակումներ:

<sup>3</sup> ՀՀ ոստիկանության կայքի լրահոսում հրապարակվող «Օպերատիվ իրավիճակը հանրապետությունում» հոդվածաշարը, «02» և «Հերթապահ մաս» հաղորդաշարերը չեն հավաքագրվել և վերլուծվել, քանի որ պարունակել են լրահոսի հրապարակումների նույն տեղեկությունը:

ՀՀ ոստիկանության հրապարակումների համամասնությունը հավաքագրված ընդհանուր հրապարակումներում, գրեթե, փոփոխության չի ենթարկվել:

Չանգվածային լրատվության միջոցներով հրապարակումների համար տեղեկության հիմնական աղբյուր է հանդիսացել ՀՀ ոստիկանությունը՝ 2018 թ.՝ 147 անգամ, 2019 թ.՝ 449 անգամ (տե՛ս աղյուսակ 2)՝ 2 և ավելի անգամ գերազանցելով պետական այլ մարմիններին:

## Աղյուսակ 2

**Չանգվածային լրատվության միջոցներով տարածված հրապարակումների դասակարգումն՝ ըստ ՀՀ-ում գործող պետական մարմիններից և այլ աղբյուրներից ստացված տեղեկության**

N	Պետական մարմիններ	2017 թ.		2018 թ.		2019 թ.		Ընդամենը		
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	
1	Ոստիկանություն	268	48.8	147	33.9	449	41.4	864	41.8	
2	Արդարադատության նախարարություն	37	6.8	62	14.3	201	18.5	300	14.5	
	<i>Այդ թվում՝</i>									
	<i>Քրեակատարողական ծառայություն</i>	<i>37</i>	<i>6.8</i>	<i>62</i>	<i>14.3</i>	<i>193</i>	<i>17.8</i>	<i>292</i>	<i>14.1</i>	
3	Հատուկ քննչական ծառայություն	66	12	21	4.8	0	0	87	4.2	
4	Քննչական կոմիտե	52	9.5	63	14.5	172	15.9	287	13.9	
5	Պետական եկամուտների կոմիտե	26	4.7	59	13.6	137	12.6	222	10.7	
6	Ազգային անվտանգության ծառայություն	29	5.3	48	11.1	47	4.3	124	6	
7	Առողջապահության նախարարություն	12	2.2	12	2.8	29	2.7	53	2.6	
	<i>Այդ թվում՝</i>									
	<i>Կախվածությունների բուժման ազգային կենտրոն</i>	<i>0</i>	<i>0</i>	<i>2</i>	<i>0.5</i>	<i>9</i>	<i>0.8</i>	<i>11</i>	<i>0.5</i>	
	<i>Առողջապահական տեսչական մարմին</i>	<i>0</i>	<i>0</i>	<i>1</i>	<i>0.2</i>	<i>0</i>	<i>0</i>	<i>1</i>	<i>0.05</i>	
	<i>Շտապ բժշկական օգնություն</i>	<i>0</i>	<i>0</i>	<i>0</i>	<i>0</i>	<i>1</i>	<i>0.1</i>	<i>1</i>	<i>0.05</i>	
8	Կառավարություն	10	1.8	6	1.4	4	0.4	20	1	
9	Դատախազություն	9	1.6	6	1.4	19	1.8	34	1.6	
10	Ազգային ժողով	16	2.9	5	1.1	10	0.9	31	1.5	
11	Այլ	24	4.4	5	1.1	16	1.5	45	2.2	
<b>Ընդամենը</b>		<b>549</b>	<b>100</b>	<b>434</b>	<b>100</b>	<b>1084</b>	<b>100</b>	<b>2067</b>	<b>100</b>	
N	Այլ մարմիններ, կազմակերպություններ պաշտոնատար անձինք	մասնավոր և/կամ ոչ	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Քաղաքացիներ		7	1.5	10	2.7	16	2.6	33	2.3
2	Փաստաբաններ և/կամ իրավաբաններ		2	0.4	0	0	2	0.3	4	0.3
3	Հասարակական և/կամ միջազգային կազմակերպություն		12	2.6	3	0.8	1	0.2	16	1.1
4	Բժիշկ և/կամ փորձագետ		0	0	0	0	3	0.5	3	0.2
5	Սոցիոլոգ		0	0	2	0.5	2	0.3	4	0.3
6	Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ		3	0.7	0	0	0	0	3	0.2
7	Հայաստանում Ռուսաստանի սահմանապահ վարչություն		5	1.1	3	0.8	43	7.1	51	3.5
8	Այլ		1	0.2	8	2.2	12	2	21	1.5
9	<i>Չանգվածային լրատվության միջոց</i>		<i>433</i>	<i>93.5</i>	<i>346</i>	<i>93</i>	<i>527</i>	<i>87</i>	<i>1306</i>	<i>90.6</i>
<b>Ընդամենը</b>			<b>463</b>	<b>100</b>	<b>372</b>	<b>100</b>	<b>606</b>	<b>100</b>	<b>1441</b>	<b>100</b>
<b>Ընդհանուր</b>			<b>1012</b>		<b>806*</b>		<b>1690</b>		<b>3508</b>	

*\* Ձանգվածային լրատվության միջոցներով հրապարակումների ընդհանուր թվից այս թվի տարբերությունը պայմանավորված է 1 հրապարակման մեջ միաժամանակ պետական մարմիններից և այլ աղբյուրներից տեղեկության առկայությամբ:*

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը, ՀՀ քննչական կոմիտեն, ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, Հայաստանում Ռուսաստանի սահմանապահ վարչությունը ևս հաճախակի եղել են զանգվածային լրատվության միջոցներով հրապարակումների տեղեկության աղբյուր (2018թ.-ին՝ 256 հրապարակում, 2019 թ.-ին՝ 592, 2018-2019թթ.-ին հավաքագրված 3034 հրապարակումների մոտ 28 %): Հրապարակումները, որոնցում տեղեկության աղբյուր են այդ մարմինները, ինչպես նաև ՀՀ ոստիկանությունը, որպես կանոն վերաբերել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի շրջանակներում իրականացված միջոցառումներին՝ թմրամիջոցների հայտնաբերմանը, թմրամիջոց գործածող, իրացնող, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ արգելված այլ արարքների համար անձանց հայտնաբերմանը և նրանց նկատմամբ կիրառվող քրեադատավարական գործողություններին: ՀՀ դատախազության կայք-էջով տարածված, ինչպես նաև այն հրապարակումներում, որոնցում տեղեկության աղբյուր է հանդիսացել վերջինս, կրկին հիմնական ուղղվածությունը եղել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի շրջանակներում իրականացված գործողությունների լուսաբանումը:

Կարող ենք փաստել, որ հավաքագրված նյութերի գերակշիռ մասն իրավական ուղղվածություն ունեն, իսկ առողջապահական, սոցիալ-վերականգնողական ուղղվածությամբ հրապարակումները, գրեթե, բացակայել են: Թեև ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2018-2019 թթ.-ին արվել է 19 հրապարակում և արձանագրվել էական աճ՝ 2017թ.-ի համեմատ (1 հրապարակում), այնուհանդերձ, դրանք հիմնականում եղել են ոչ թիրախային և չեն վերաբերել թմրամիջոց գործածող անձանց բուժմանը, թմրամիջոցների գործածման կանխարգելմանը:

2018թ.-ին ՀՀ առողջապահության նախարարության հրապարակումներից 7-ը վերաբերել են դեղերի դուրսգրման ընթացակարգերին, 2-ը՝ պալիատիվ բուժօգնության տրամադրման շրջանակներում թմրամիջոցների նշանակման հետ կապված հարցերին (անդրադարձ), 1-ական՝ Թմրամիջոցների չարաշահման և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային օրվան, հոգեկան առողջության վրա թմրամիջոցների օգտագործման վնասակարությանը (անդրադարձ), թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում հեպատիտ Զ-ի հայտնաբերմանն ուղղված պիլոտային ծրագրին (անդրադարձ):

2019թ.-ին ՀՀ առողջապահության նախարարության հրապարակումներից 2-ը վերաբերել են Վիեննայում անցկացվող ՄԱԿ-ի թմրամիջոցների դեմ պայքարի հանձնաժողովի 62-րդ նստաշրջանին մասնակցելուն և «Հայաստանում թմրանյութերի դեմ պայքարի ոլորտում



իրականացվող քաղաքականությունը, միջոլորտային և միջազգային համագործակցության ընթացքն ու վերջինիս արդյունքները» ներկայացնելուն, 1-ական հրապարակում՝ Թմրամիջոցների չարաշահման և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային օրվան, ՀՀ առողջապահության նախարարի՝ նարկոլոգիական դիսպանսեր այցին, դեղերի դուրսգրման ընթացակարգերի փոփոխությանը, պալիատիվ բուժօգնության շրջանակներում թմրամիջոցների շրջանառության կարգավորման օրենսդրության կիրարկման ուսումնասիրությանը (անդրադարձ) և Եզիպտոս մեկնելիս՝ անձնական օգտագործման դեղերի սահմանված արգելքներին (անդրադարձ):

Հարկ է նշել, որ թեև ՀՀ առողջապահության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները ՀՀ ոստիկանության և այլ գերատեսչությունների հետ համատեղ ՀՀ կառավարության *«Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2019 թվականի միջոցառումների ծրագրին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» 27 սեպտեմբերի 2018 թվականի N 1017-Լ որոշմամբ*<sup>4</sup> հաստատված գործողությունների կատարման պատասխանատու մարմիններ են, վերջիններիս պաշտոնական կայք-էջերով այդ ծրագրերի իրականացման վերաբերյալ 2019թ.-ին պատշաճ, կանոնավոր տեղեկություն չի տարածվել, ինչպես և՛ նախորդող տարիներին հաստատված ծրագրերի վերաբերյալ: Ուստի, կրկին կարող ենք փաստել այս բնագավառում նշված գերատեսչությունների ոչ հաշվետու ու թափանցիկ աշխատանքի մասին:

Ինչ վերաբերում է զանգվածային լրատվության միջոցներով հրապարակումներին, որոնց համար տեղեկության աղբյուր է հանդիսացել ՀՀ առողջապահության նախարարությունը, այս դեպքում ևս, լրատվամիջոցները որպես կանոն, տարածել են նախարարության կայք-էջի հրապարակումները (մյուս դեպքերում դրանք վերաբերել են պալիատիվ օգնության շրջանակներում թմրամիջոցների նշանակմանը, ազատ վաճառքի, շրջանառության և օգտագործման լուրերի հերքմանը, ՀՀ-ում թմրամիջոցների գործածման վիճակագրությանը, շտապ բուժօգնության ծառայության աշխատակիցների կողմից թմրամիջոց գործածող անձանց սպասարկման դժվարություններին): Ուշադրության է արժանի 2019 թ.-ին Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի հրապարակման տարածումը լրատվամիջոցների կողմից, որում նշվում է մարիխուանայի՝ առողջության վրա բացասական հետևանքների մասին և կոչ արվում բացառել հոգեներգործուն նյութերի գործածումը և ձևավորել առողջ կենսակերպ:

*Այսպիսով, արձանագրում ենք, որ պետական մարմինների պաշտոնական կայք- էջերով և զանգվածային լրատվության միջոցներով 2018-2019թթ.-ին թմրամիջոցների ոլորտի վերաբերյալ լուսաբանվող նյութերում շարունակվել է նախորդ տարիներին դիտարկված*

<sup>4</sup> Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=125619>

օրինաչափությունը՝ վերստին գերակայել են իրավական բնույթի նյութերը, իսկ թմրամիջոց գործածող անձանց աջակցման, թմրամիջոցների գործածման կանխարգելման հարցում կարևոր նշանակություն ունեցող առողջապահական, սոցիալ-վերականգնողական ծառայությունների, ծրագրերի, միջոցառումների մասին տեղեկությունը, որպես այդպիսին, բացակայել է:

## Հրապարակումների բնույթը, հանրային վերաբերմունքի ձևավորման վրա դրանց ազդեցությունը

### Հրապարակումների բնույթը

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ գերակշռող են քրեադատավարական բնույթի հրապարակումները: 2018-2019թթ.-ին հավաքագրված 3.034 հրապարակումներից այդպիսին է դասակարգվել 2.385-ը (մոտ 79 %), 649-ը՝ (մոտ 21 %)՝ եղել են ընդհանուր բնույթի տեղեկատվական հրապարակումներ (տե՛ս աղյուսակ 3):

Ինչպես երևում է աղյուսակից, 2017-2019թթ.-ի ընթացքում 3.132 հրապարակումների 74,5 %-ը եղել են քրեադատավարական գործողությունների վերաբերյալ: Ընդ որում՝ այդ հրապարակումների մեծ մասը՝ 2.759-ը (մոտ 66 %) թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ են՝ պաշտոնատար անձանց և քաղաքացիների մատնանշմամբ: Քրեադատավարական հրապարակումների նման մեծ թիվը վկայում է ոլորտում պատժողական քաղաքականության շարունակականության մասին: Ընդհանուր բնույթի տեղեկատվական հրապարակումների թիվը 1.070 է՝ 2017-2019 թթ.-ի հավաքագրված հրապարակումների 25,5 %-ը:

### Աղյուսակ 3

#### Հրապարակումների դասակարգումն՝ ըստ բովանդակության

N	Հրապարակման բովանդակությունը	2017 թ.		2018 թ.		2019 թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Քրեադատավարական գործողությունների իրականացման	747	64	705	71.9	1680	81.8	3132	74.5

վերաբերյալ									
<i>Այդ թվում՝</i>									
<i>Թմրամիջոց գործածող անձանց կողմից կատարված հանցագործություններ</i>	22	1.9	18	1.8	9	0.4	49	1.2	
<i>Թմրամիջոցների ապօրինի շրջանառություն՝ պաշտոնատար անձանց և քաղաքացիների մատնանշմամբ</i>	651	55.7	618	63	1490	72.6	2759	65.7	
<i>Թմրամիջոցների ապօրինի շրջանառություն՝ առանց կոնկրետ անձանց կամ մարդկանց խմբերի մատնանշման</i>	60	5.1	38	3.9	107	5.2	205	4.9	
<i>Քաղաքացիների նկատմամբ քրեական պատասխանատվության, քրեական հետապնդման և քրեադատավարական այլ գործողությունների մասին նյութեր</i>	673	57.6	622	63.4	1490	72.6	2785	66.3	
2 Ընդհանուր բնույթի տեղեկատվական	421	36	276	28.1	373	18.2	1070	25.5	
<b>Ընդամենը</b>	<b>1168</b>	<b>100</b>	<b>981</b>	<b>100</b>	<b>2053</b>	<b>100</b>	<b>4202</b>	<b>100</b>	

Աղյուսակից երևում է նաև, որ 2019 թ.-ին, նախորդ տարիների համեմատությամբ, կրկնակի նվազել են թմրամիջոց գործածող անձանց կատարած հանցագործությունների վերաբերյալ հրապարակումները: Սա դրական միտում է, քանի որ նման հրապարակումները նպաստում են թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ առկա խարանի մեծացմանը:

*Այսպիսով, թմրամիջոցների բնագավառի վերաբերյալ հրապարակումները հիմնականում տարածվում են ՀՀ ոստիկանության տրամադրած տեղեկության հիման վրա, դրանք քրեադատավարական բնույթի են՝ օրենքով արգելված արարքների կատարման համար անձի նկատմամբ իրականացվող պատժողական բնույթի գործողությունների վերաբերյալ:*

### **Թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա հրապարակումների ազդեցությունը**

2018-2019 թթ.-ին թմրամիջոց գործածող անձանց և նրանց խնդիրների նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումները 4-ն են: Դրանք հրապարակվել են 2018 թ.-ին, որոնցից 2-ը նպաստում են դրական, 2-ը՝ բացասական վերաբերմունքի ձևավորմանը: 2019 թ.-ին նման հրապարակումներ չեն հավաքագրվել (տե՛ս աղյուսակ 4):

**Հրապարակումների դասակարգումն՝ ըստ թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա ունեցած ազդեցության**

N	Հրապարակման բնույթը	2017 թ.		2018 թ.		2019 թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Դրական վերաբերմունք ձևավորող	9	1	2	0.2	0	0	11	0.3
2	Բացասական վերաբերմունք ձևավորող	12	1	2	0.2	0	0	14	0.3
3	Դրական կամ բացասական վերաբերմունք չձևավորող	1147	98	977	99.6	2053	100	4177	99.4
<b>Ընդամենը</b>		<b>1168</b>	<b>100</b>	<b>981</b>	<b>100</b>	<b>2053</b>	<b>100</b>	<b>4202</b>	<b>100</b>

Ինչպես երևում է աղյուսակ 4-ից, 2017 թ.-ի համեմատությամբ 2018-2019 թթ.-ին թմրամիջոց գործածող անձանց և նրանց խնդիրների նկատմամբ դրական և բացասական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումների՝ առանց այն էլ փոքր թիվն էլ ավելի է նվազել: Անշուշտ, բացասական վերաբերմունք ձևավորող հրապարակումների թվի նվազումը և բացակայությունը դրական միտում է, մտահոգիչ է, սակայն, դրական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող, թմրամիջոց գործածող անձանց խնդիրների մասին բարձրաձայնող և թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ առկա կարծրատիպերի նվազեցմանը միտված հրապարակումների բացակայությունը:

Ուշադրության է արժանի ՀՀ ոստիկանության հրապարակումը<sup>5</sup>, որում թմրամիջոց գործածող անձը խոսում է իր կյանքի փորձի մասին՝ կոչ անելով զերծ մնալ թմրամիջոցների օգտագործումից:

Ինչպես արդեն նշվել է վերևում, 2018-2019 թթ.-ին հրապարակվել է 27 նյութ՝ թմրամիջոց գործածող անձանց կողմից թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապ չունեցող հանցագործությունների մասին, որը ևս նպաստում է թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ խարանի և կարծրատիպերի ձևավորմանը:

2018 թ.-ին հավաքագրված 981 հրապարակումներից 29-ը (մոտ 3 %), իսկ 2019 թ.-ի 2.053 հրապարակումներից 115-ը (մոտ 6 %) պարունակել են կարծրատիպային բառապաշար: Հիմնականում օգտագործվել են «թմրամոլ» և «թմրամոլություն», հանդիպել են նաև «նարկոման» և «մոլախոտ» բառերը: 2017 թ.-ի համեմատ՝ (կարծրատիպային բառեր պարունակող հրապարակումները կազմում էին մոտ 6 %) դրանց թիվը 2018 թ.-ին նվազել է, սակայն 2019 թ.-ին կրկին վերականգնվել է 2017թ.-ի ցուցանիշը:

<sup>5</sup> Տե՛ս <https://www.police.am/news/view/%d5%a9%d5%b401052018.html>

Պետական մարմինները տեղեկատվության աղբյուր են հանդիսացել կարծրատիպային եզրույթներ պարունակող լրատվական հրապարակումներից 2018 թ.-ին՝ 12-ի, իսկ 2019 թ.-ին՝ 55-ի համար: Հարկ է նշել, որ կարծրատիպային եզրույթներով հրապարակումներ տարածվել են նաև պետական մարմինների կայք-էջերով՝ 2018 թ.-ին՝ 5, 2019 թ.-ին՝ 29 հրապարակում:

*Այսպիսով, արձանագրում ենք, որ թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ ակնհայտ բացասական կամ դրական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումները 2018 թ.-ին նվազել են, իսկ 2019 թ.-ին՝ առհասարակ բացակայել: Միևնույն ժամանակ եղել են հրապարակումներ, որոնք կարող են բացասաբար ազդել վերաբերմունքի ձևավորման վրա: Մեծաթիվ են եղել նաև կարծրատիպային եզրույթներ պարունակող հրապարակումները, որոնք նույնպես կարող են նպաստել թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ խարանի և կարծրատիպերի ձևավորմանը:*

### **Հրապարակումների ազդեցությունը թմրամիջոցների և դրանց գործածման նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա**

2018-2019 թթ.-ին հավաքագրված 3.034 հրապարակումներից 16-ը (0,5 %) նպաստում են թմրամիջոցների և դրանց գործածման նկատմամբ հանրային դրական վերաբերմունքի ձևավորմանը, 27-ը (0,9 %)՝ բացասական վերաբերմունքի ձևավորմանը:

Թմրամիջոցների և դրանց՝ ոչ բժշկական նպատակներով գործածման նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումներում թմրամիջոցը, մասնավորապես՝ մարիխուանան, ներկայացվում է որպես տարբեր հիվանդությունների կանխարգելման և բուժման, հաճույքի աղբյուր: Հրապարակումները հանրային ճանաչում ունեցող անձանց դրական վերաբերմունքի, նրանց կողմից օգտագործման մասին են (այս հրապարակումներում որևէ տեղեկություն թմրամիջոցի օգտագործման հետ կապված մտահոգության մասին չկա):

Բացասական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումները թմրամիջոցների նկատմամբ հանրային ճանաչում ունեցող անձանց բացասական վերաբերմունքի, այդ թվում՝ իրենց կյանքի բացասական փորձի, թմրամիջոցների բացասական հետևանքների, գերդոզավորման հետևանքով մահացության դեպքերի մասին են:

Հրապարակումների գերակշիռ մասը չեզոք բնույթի է. ակնհայտորեն չի նպաստում դրական կամ բացասական վերաբերմունքի ձևավորմանը (տե՛ս աղյուսակ 5):

**Հրապարակումների դասակարգումն՝ ըստ թմրամիջոցների և դրանց գործածման նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա ունեցած ազդեցության**

N	Լյուրի բնույթը	2017 թ.		2018 թ.		2019 թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Դրական վերաբերմունք ձևավորող	4	0.4	7	0.7	9	0.4	20	0.5
2	Բացասական վերաբերմունք ձևավորող	74	6.3	10	1	17	0.8	101	2.4
3	Դրական կամ բացասական վերաբերմունք չձևավորող	1090	93.3	964	98.3	2027	98.7	4081	97.1
<b>Ընդամենը</b>		<b>1168</b>	<b>100</b>	<b>981</b>	<b>100</b>	<b>2053</b>	<b>100</b>	<b>4202</b>	<b>100</b>

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 4-ից, թեև 2018-2019 թթ.-ի ընթացքում թմրամիջոցների և դրանց օգտագործման նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումները գերակշռում են դրական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումներին, այնուամենայնիվ, եթե 2017 թ. բացասական վերաբերմունք ձևավորող հրապարակումները 70-ով ավել են եղել դրական վերաբերմունք ձևավորող հրապարակումներից, ապա 2019 թ. այդ տարբերությունը կազմել է ընդամենը 8 հրապարակում:

*Այսպիսով, փաստում ենք, որ 2018-2019 թթ.-ին 2017 թ.-ի համեմատությամբ զանգվածային լրատվության միջոցներում թմրամիջոցների և դրանց օգտագործման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորող հրապարակումների թվի աճ է գրանցվել, մինչդեռ բացասական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումների թիվը շեշտակի նվազել է:*

**Հրապարակումներում մարդու իրավունքների խախտման դեպքերի արտացոլումը**

2018-2019 թթ.-ին ուսումնասիրվող բնագավառի լուսաբանումներում մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ հրապարակումները կրճատվել են 2017 թ.-ի համեմատությամբ: 2017թ.-ին եղել է նման տեղեկություններ պարունակող 11 հրապարակում՝ 8 դեպքի վերաբերյալ: 2018-2019թթ.-ին հավաքագրված հրապարակումներից 2-ն են տեղեկություններ պարունակել մարդու իրավունքների, մասնավորապես՝ արդար դատաքննության և խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից

զերծ մնալու իրավունքների հնարավոր խախտման վերաբերյալ: Հրապարակումները վերաբերել են՝

- թմրամիջոց ձեռք բերելու և պահելու կասկածանքով ոստիկանություն տեղափոխված անձի գրպանը խուզարկության ընթացքում խուզարկող ոստիկանի կողմից աննկատ կերպով թմրամիջոցի 2 փաթեթ գցելուն<sup>6</sup> (2018 թ.)
- անձի նկատմամբ շինծու քրեական գործի հարուցմանը և մաքսատան աշխատակիցների կողմից ֆիզիկական և հոգեբանական խոշտանգման ենթարկելուն<sup>7</sup> (2019 թ.):

Ուշադրության է արժանի հրապարակումը, որում փորձագետն անդրադառնում է պալիատիվ խնամքի կարիք ունեցող անձանց ցավազրկող դեղամիջոցների նշանակման համակարգային խնդրին: Վերջինս նշում է, որ ցավազրկողների կարիք ունեցող 12 անձից միայն մեկն է ստանում դեղամիջոցը: Փորձագետը նաև նշում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության ռիսկով պայմանավորված՝ բժիշկների կողմից իրավապահ մարմիններին ցավազրկող դեղորայք ստացող անձանց անձնական տվյալների փոխանցման մասին<sup>8</sup>:

Շարունակական բնույթ է կրում անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտումը: 2018-2019 թթ.-ին հավաքագրված 3.034 հրապարակումներից 348-ում անձնական տվյալներ են արտացոլվել, որոնց հիման վրա փաստացի հնարավոր է նույնականացնել անձանց (տե՛ս աղյուսակ 6):

## Աղյուսակ 6

### Անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող հրապարակումների 2015-2019 թթ.-ի վիճակագրությունը

Տարեթիվը	Հրապարակումների թիվը	Անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող հրապարակումների	
		Թիվը	Տոկոսը
2015 թ.	1527	165	11
2016 թ.	1505	243	16
2017 թ.	1168	229	20

<sup>6</sup> Տե՛ս <https://news.am/arm/news/450762.html>

<sup>7</sup> Տե՛ս <https://a1plus.am/hy/article/345268>

<sup>8</sup> Տե՛ս <https://med.news.am/arm/news/21095/hay-bzhishknery-zgushanum-en-tsanr-hivandnerin-apionayin-analgetikner-nshanakel-pordzaget.html>

2018 թ.	981	203	21
2019 թ.	2053	145	7
<b>Ընդամենը</b>	<b>9232</b>	<b>1317</b>	<b>14</b>

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 6-ից, անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտմամբ հրապարակումների թիվը 2019 թ.-ին, նախորդ տարիների համեմատությամբ, կտրուկ նվազել է: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ ոստիկանությունը, որն, ինչպես նշվել է վերևում, պաշտոնական մարմիններից ամենաշատ հրապարակումներ կատարողն էր ու զանգվածային լրատվության միջոցներով հրապարակումների զգալի մասի տեղեկության աղբյուրը, 2019 թ.-ին որդեգրել է տեսանյութերում դեմքը փակելու և անուն ազգանունը չհանրայնացնելու մոտեցումը, ինչը հատկապես տեսանելի է 2019 թ.-ի 2-րդ կեսին: Փաստացի, 2019 թ.-ի 2-րդ կեսին ՀՀ ոստիկանության հրապարակումներում չեն ներկայացվել հիմնականում անձնական այնպիսի տվյալներ, որոնցով հնարավոր լիներ անձի նույնականացումը:

2018թ.-ին անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող 203 հրապարակումներում տեղեկություններ են արտացոլվել 71 դեպքի վերաբերյալ՝ խախտելով 148 անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը: Ընդ որում՝ 61 անձի դեպքում տեղեկություն է տրամադրվել նրանց կողմից թմրամիջոց գործածելու կամ թմրամիջոց գործածելու կասկածանքի վերաբերյալ, ինչի հետևանքով խախտվել է նաև անձի առողջության վերաբերյալ տեղեկությունների գաղտնիությունը: 2019 թ.-ին անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող 145 հրապարակումներում տեղեկություններ են արտացոլվել 57 դեպքի վերաբերյալ՝ խախտելով 104 անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը, որոնցից 42-ի դեպքում՝ թմրամիջոց գործածելու կամ թմրամիջոց գործածելու կասկածանքի վերաբերյալ:

## Աղյուսակ 7

**Անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող հրապարակումների դասակարգումն՝ ըստ կոնկրետ անձանց նույնականացման և թմրամիջոցների գործածման**

N	Հրապարակման տեսակը	2017 թ.		2018 թ.		2019 թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Հրապարակումների թիվը, որոնք պարունակում են անձի անձնական տվյալներ	229	19.6	203	20.7	145	7.5	577	13.7
2	Անձնական տվյալներ պարունակող հրապարակումներում	118	10.1	148	15.1	104	5.1	370	8.8



	անձանց թիվը, ում հնարավոր է նույնականացնել								
3	Անձնական տվյալներ պարունակող հրապարակումներում անձանց թիվը, ովքեր թմրամիջոց են գործածում կամ կասկածվում են թմրամիջոցի գործածման մեջ	66	5.7	61	6.2	42	2	169	4
<b>Հավաքագրված հրապարակումների թիվը</b>		<b>1168</b>		<b>981</b>		<b>2053</b>		<b>4202</b>	

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 7-ից, 2019 թ.-ին զգալի նվազել է անձի անձնական տվյալներ պարունակող հրապարակումների թիվը (տոկոսային հարաբերությամբ 2018 թ.-ի համեմատ՝ մոտ 3 անգամ), ինչը ՀՀ ոստիկանության կողմից տվյալների տարածման քաղաքականության դրական փոփոխության արդյունքն է:

2018 թ.-ին անձի անձնական տվյալներ պարունակող 203 նյութերից 57-ը հրապարակվել է պետական մարմնի՝ ՀՀ ոստիկանության պաշտոնական կայք-էջում, մյուս 146 հրապարակումները՝ զանգվածային լրատվության միջոցների կայք-էջերում: Չանգվածային լրատվության միջոցներով տարածված 146 նյութերից 118-ը հրապարակվել է պետական մարմինների կողմից տրամադրված տեղեկության հիման վրա (91 հրապարակում՝ ՀՀ ոստիկանության, 17՝ ՀՀ քննչական կոմիտեի, 4՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, 3՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության, 3՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության), 28-ը՝ զանգվածային լրատվության միջոցինն են:

2019 թ.-ին անձի անձնական տվյալներ պարունակող 145 նյութերից 35-ը հրապարակվել է պետական մարմնի՝ կրկին ՀՀ ոստիկանության պաշտոնական կայք-էջում, 110-ը՝ զանգվածային լրատվության միջոցների կայք-էջերում: Չանգվածային լրատվության միջոցներով տարածված 110 նյութերից 69-ը հրապարակվել է պետական մարմինների տրամադրած տեղեկության հիման վրա (66 հրապարակում՝ ՀՀ ոստիկանության, 2՝ ՀՀ քրեակատարողական ծառայության, 1՝ ՀՀ քննչական կոմիտեի), 41-ը՝ զանգվածային լրատվության միջոցինն են:

Թեև ՀՀ ոստիկանությունը փոփոխել է հրապարակումներում անձնական տվյալների տարածման քաղաքականությունը, հարկ է նշել, սակայն, որ մտահոգիչ է ոստիկանության կողմից իր տրամադրության ներքո գտնվող տեղեկությունների տրամադրումը լրագրող Գագիկ Շամշյանին: Այսպես, 2019թ.-ին զանգվածային լրատվության միջոցի կողմից անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող 41 հրապարակումներից 27-ի տեղեկատվության աղբյուրը Գ.Շամշյանն է: Օրինակ, *«Ապօրինի»*

*թմրաշրջանառության տեղեկություններ էին ստացվել. բերման է ենթարկվել 9 անձ»* վերտառությամբ ՀՀ ոստիկանության հրապարակած նյութում<sup>9</sup> անձնական տվյալներ չեն տրամադրվում: Նույն դեպքի վերաբերյալ Գ.Շամշյանի հրապարակման մեջ, սակայն, նշված են բերման ենթարկված անձանց անուն ազգանունները, տարիքը<sup>10</sup>: Ի դեպ, Գ.Շամշյանը հրապարակում է հայտնաբերված թմրամիջոցների հստակ չափը, մինչդեռ ոստիկանությունը՝ ոչ, այնինչ, այդ դեպքում տեղեկության միակ տիրապետողը պետք է լինի ոստիկանությունը:

2018-2019 թթ.-ին հավաքագրվել են նաև հրապարակումներ, որոնք անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման վտանգներ են պարունակում և որոշ դեպքերում դրանցում հնարավոր է նույնականացնել անձանց: 2018թ.-ին հավաքագրված 981 հրապարակումներից նման տեղեկություն պարունակում են 146-ը, 2019թ.-ի 2053 հրապարակումներից՝ 184-ը:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման վտանգներ պարունակող հավաքագրված 330 հրապարակումները վերաբերել են 181 դեպքի և տեղեկություն են տրամադրել 241, այդ թվում՝ թմրամիջոց գործածող 66 անձի վերաբերյալ: Մասնավորապես՝ 2018 թ.-ի հրապարակումները վերաբերել են 85 դեպքի և տեղեկություն տրամադրել 112, այդ թվում՝ թմրամիջոց գործածող 31 անձի վերաբերյալ, 2019 թ.-ին՝ 96 դեպքի՝ տեղեկություն տրամադրելով 129, այդ թվում՝ թմրամիջոց գործածող 35 անձի վերաբերյալ (տե՛ս աղյուսակ 8):

## Աղյուսակ 8

### Անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման վտանգներ պարունակող հրապարակումների դասակարգումն՝ ըստ կոնկրետ անձանց նույնականացման և թմրամիջոցների գործածման

N	Հրապարակման տեսակը	2017 թ.		2018 թ.		2019 թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Հրապարակումների թիվը, որոնք պարունակում են անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման վտանգներ	193	16.5	85	8.7	96	4.7	374	8.9
2	Հրապարակումներում անձանց թիվը, ում նույնականացնելու վտանգ է	108	9.2	112	11.4	129	6.3	349	8.3

<sup>9</sup> Տե՛ս <https://www.police.am/news/view/%d5%a1%d5%ba%d6%85%d6%80%d5%ab%d5%b6%d5%ab270519.html>

<sup>10</sup> Տե՛ս <https://www.lragir.am/2019/05/19/444174/>

	առկա								
3	Հրապարակումներում անձանց թիվը, ում նույնականացնելու վտանգ է առկա և ովքեր թմրամիջոց են գործածում կամ կասկածվում են թմրամիջոցի գործածման մեջ	62	5.3	31	.2	35	1.7	128	3
<b>Հավաքագրված հրապարակումների ընդհանուր թիվը</b>		<b>1168</b>		<b>981</b>		<b>2053</b>		<b>4202</b>	

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 8-ից, անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման վտանգներ պարունակող հրապարակումների թիվն ուսումնասիրվող տարիներին նվազել է՝ 2018 թ.-ին կազմելով 8.7 %, 2019 թ.-ին՝ 4,7 %: Փոխարենն աճել է այն անձանց թիվը, որոնց նույնականացնելու վտանգ եղել է, թեև նվազել է դրանցում թմրամիջոց գործածող անձանց թիվը:

*Այսպիսով, արձանագրում ենք, որ 2018-2019թթ.-ին շարունակվել է անձի անձնական տվյալները բացահայտող, անձին նույնականացնելու վտանգներ պարունակող հրապարակումների տարածումը, թեև 2019թ.-ին նման բովանդակությամբ հրապարակումները կտրուկ նվազել են՝ պայմանավորված ՀՀ ոստիկանության կողմից 2019 թ.-ի 2-րդ կեսից իրենց հրապարակումներում անձնական տվյալների տարածման քաղաքականության հանդեպ դրական փոփոխությամբ: Մինչև նույն ժամանակ անընդունելի է պետական մարմնի տիրապետման և տնօրինման ենթակա տեղեկության փոխանցումն այլ անձանց: Ինչ վերաբերում է հրապարակումներում մարդու իրավունքների խախտման հնարավոր դեպքերին՝ շարունակում է մտահոգիչ մնալ իրավապահ մարմինների կողմից թմրամիջոցների օգտագործման, պահման, տեղափոխման կամ օրենքով անթույլատրելի համարվող այլ արարքները ենթադրյալ ապօրինի որակող հրապարակումների շարունակականությունը:*

## Ամփոփում

2018-2019 թթ.-ի ընթացքում թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և առհասարակ թմրամիջոցների վերաբերյալ հավաքագրվել և վերլուծվել է 3.034 հրապարակում: Այդ հրապարակումներից 544-ը հրապարակվել է պետական մարմինների պաշտոնական կայք-էջերում, 2490-ը՝ զանգվածային լրատվության միջոցների կայքերում:

Հրապարակումների մեծ մասը տարածվել է ՀՀ ոստիկանության կողմից կամ վերջինիս տրամադրած տեղեկության հիման վրա, որոնք, որպես կանոն, վերաբերել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի շրջանակներում իրականացված միջոցառումներին՝ թմրամիջոցների հայտնաբերմանը, թմրամիջոց գործածող, իրացնող, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ արգելված այլ արարքների համար քաղաքացիների հայտնաբերմանը և նրանց նկատմամբ կիրառվող քրեադատավարական գործողություններին: Հավաքագրված հրապարակումների գերակշիռ մասն ունեցել են իրավական բովանդակություն, առողջապահական, սոցիալ-վերականգնողական բովանդակությամբ հրապարակումները, գրեթե, բացակայել են: Թեև 2018-2019 թթ.-ին աճել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից ուսումնասիրվող բնագավառի վերաբերյալ հրապարակումների թիվը, այնուամենայնիվ, դրանք հիմնականում եղել են ոչ թիրախային և չեն վերաբերել թմրամիջոց գործածող անձանց բուժմանը, թմրամիջոցների գործածման կանխարգելմանը:

2018-2019 թթ.-ին նվազել են թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ ակնհայտ բացասական կամ դրական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումները: Մինևույն ժամանակ թմրամիջոց գործածող անձանց կողմից թմրամիջոցների հետ կապ չունեցող հանցագործությունների մասին 27 հրապարակումները կարող են նպաստել թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը: Մեծ թիվ են կազմել նաև կարծրատիպային եզրույթներ պարունակող հրապարակումները (հավաքագրված 3034 հրապարակումների 3.4 %), որոնք կարող են նպաստել թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ խարանի և կարծրատիպերի ձևավորմանը:

2018-2019 թթ.-ի ընթացքում աճել է զանգվածային լրատվության միջոցների կայք- էջերում թմրամիջոցների և դրանց օգտագործման նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումների թիվը, բացասական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումները, նախորդ տարվա համեմատությամբ, նվազել են:

2018-2019 թթ.-ին շարունակվել են տարածվել անձի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող կամ խախտման վտանգ պարունակող հրապարակումներ: Այս համատեքստում հատկանշական է ՀՀ ոստիկանության կողմից 2019թ.-ի 2-րդ կեսին հրապարակումներում անձնական տվյալների արձարծման քաղաքականության փոփոխությունը՝ ինչը նպաստել է նշված իրավունքի խախտումների թվի նվազմանը: Միաժամանակ, խնդրահարույց և մտահոգիչ է զանգվածային լրատվության միջոցի կողմից այնպիսի տեղեկության հրապարակումը, որի միակ տիրապետողը պետք է լիներ ոստիկանությունը:

Այսպիսով, մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը և թմրամիջոցներին առնչվող այլ հրապարակումների վերաբերյալ մոտեցումների որոշակի դրական փոփոխություններ, այնուամենայնիվ, կազմակերպության կողմից նախկինում արձանագրած խնդիրները մեծ մասամբ օրակարգային են մնում: